ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

13.03.2025թ. Հ. Ջրվեժ

Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կազմակերպություն), ի դեմս տնօրենի պարտականությունները կատարող Լևոն Տեր-Սիմոնյանի, ով գործում է Կազմակերպության կանոնադրության համաձայն, մի կողմից և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Քոլեջ), ի դեմս տնօրեն Պարույր Սանթրոսյանի, մյուս կողմից, այսուհետ Կոմեր, կազմեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Սույն Հուշագիրը հնարավորություն է տալիս Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջ ՊՈԱ կազմակերպության սաներին՝ նախապես մշակված ծրագրի հիման վրա, բնապահպանական և էկոկրթական (էկոճանաչողական, էկոդաստիարակչական) թեմաներով անցկացնել միջոցառումներ, ինչպես նաև թեմատիկ դասընթացներ՝ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքներում:

2. Քոլեջը պարտավորվում է 5 (հինգ) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցել Կազմակերպությանը՝ իրականացվելիք միջոցառումների մասին:

3. Քոլեջը պարտավորվում է իր կողմից նշանակել պատասխանատու անձ (անձինք), ով (ովքեր) կուղեկցեն սաներին և պատասխանատու կլինեն վերջիններիս անվտանգության համար:

4. Սույն Հուշագրով Քոլեջը հնարավորություն է ունենում մասնակցելու Կազմակերպության կողմից կազմակերպված էկոկրթական, էկոճանաչողական, էկոդաստիարակչական և այլ (ծառատունկ, շաբաթօրյակ) հասարակական միջոցառումներին:

5. Քոլեջը հնարավորություն է ունենում անցկացնելու իր կողմից նշանակված պրակտիկաները Կազմակերպության ենթակայությամբ գործող տարածքներում:

6. Քոլեջը կարող է իրականացնել ցուցահանդեսային գործունեություն, համերգային ծրագրեր, ֆոտոնկարահանումներ, մշակութային միջացառումներ,

թատերական ներկայացումներ և այլ ժամանցային ծրագրեր՝ Կազմակերպության տարածքներում:

7. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկի առաջարկությամբ և մյուս կողմի համաձայնությամբ Հուշագրի գործողությունը չի դադարել:

8. Սույն Հուշագիրը կնքվում է 2 (երկու) միևնույն իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնք տրվում են կողմերին:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ	**«Երևանի տարածաշրջանայի N1 քոլեջ» ՊՈԱԿ**
Հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, հ. Ջրվեժ 0089	Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 3/1
Հեռ.՝ +374 (10)648204	Հեռ.՝ +374 (10) 285782
Էլ. Հասցե՝ reserveparksnco@env.am	Էլ. Հասցե՝ yerevancollegw@gmail.com
Տնօրենի պ/կ Լևոն Տեր-Սիմոնյան	**Տնօրեն Պարույր Սանթրոսյան**